ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՂԵԿԱՎԱՐ

ИНСПЕКЦИОННЫЙ ОРГАН
ОХРАНЫ ПРИРОДЫ И НЕДР
РЕСПУБЛИКИАРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ
ENVIRONMENTAL PROTECTION AND MINING
INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA
HEAD

№_____

«_____» _____ 2021թ.

ՀՐԱՄԱՆ

28 սեպտեմբեր 2021 104-Լ

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի ԹԻՎ 60-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 733-Լ որոշման 21-րդ կետի 7-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1"ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) ղեկավարի 2021 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» թիվ 60-Լ հրամանի հավելվածի 9-րդ կետից հետո լրացնել նոր 9.1, 9.2, 9.3, 9.4 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9.1 Տեսչական մարմնի վարչական շենքում՝ Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող խորհրդականը, իսկ Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումներում բաժնի պետերը՝

ա)ապահովում են բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան ոլորտի Լիազոր մարմնի կողմից ընդունված իրավական ակտով սահմանված՝ աշխատանքի (ծառայության) ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգումը Տեսչական մարմնում հանրային

Կորյունի փող. 15, 0009 Երևան, ՀՀ
15Koryun Str., 0009 Yerevan, RA

Էլ.փոստ՝
hovhannes.martirosyan@ecoinspect.gov.am
Web page: www.ecoinspect.am

պաշտոն զբաղեցնող, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի աշխատանքի (ծառայության) ներկայանալիս,

բ) ապահովում են սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարումը, դիտարկումների իրականացումը,

9.2 Տեսչական մարմնի վարչական շենքում՝ Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող խորհրդականը, իսկ Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումներում բաժնի պետերը՝ համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլ տված անձից մեկօրյա (աշխատանքային) ժամկետում վերցնում են բացատրություն և ներկայացնում Տեսչական մարմնի ղեկավարին,

9.3 մինչև վերոնշյալ 9.2 կետով նախատեսված պարտականության խախտումը վերացնելը յուրաքանչյուր աշխատանքային օր աշխատանքի (ծառայության) ներկայանալը համարվում է (դիտվում է) որպես առանձին (ինքնուրույն) կարգապահական խախտում:

9.4 Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետը՝

Իրականացնում է հսկողություն 9.1 և 9.2 կետերով նախատեսված գորառույթների կատարման նկատմամբ:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Տեսչական մարմնի ղեկավարին:

Մարտիրոսյան